

բարի էր իրենց մայրը ու որքան պարկեշտ: Լաց ու կոծերէ յետոյ քոյրը իր եղբօր կ'ըսէ.

«Դու գիտե՞ս, թէ ինչպէս մայրիկը սիրում էր կարգալ իր հին նամակները. նոքա բոլորը այստեղ պահարանումն են, և արդեօք լաւ չէ՞ր լինի որ մենք ևս այս գիշեր կարդանք վերջին անգամ նրա մօտ և մի անգամ ևս վերականգնացնենք նորա ամբողջ անցեալը. դա կը լինէր մի միջոց, որ կը յիշէինք գոնէ վերջին անգամ նորա մօրը և մեր անծանօթ նախորդներին, որոնց նամակներն այստեղ են գտնուում, և եթէ յիշում ես, որոնց մասին նա յաճախ խօսում էր»:

Ու արկղէն հինցած, դեղնած նամակի ծրարները կը հանեն ու յաջորդաբար նամակները կը կարդան: Կը վերցնեն ծրար մը, որուն վրայ ոչինչ գրուած չէ. կը բանան ու կը գտնեն այսպէս խօսքեր. «Իմ պաշտածս, ես քեզ սիրում եմ խելագարի նման... ես գգում եմ թէ ինչպէս շրթունքներդ դիպչում են իմ շրթունքներին, աչքերդ՝ աչքերիս, մարմինդ՝ մարմնոյս կայլն»:

Եղբայրը՝ քրոջ ձեռքէն կը խլէ նամակը. կը նայի ստորագրութեան՝ «Հէնրիկ»: Իրենց հօրն անունն էր սակայն Ռենէ: Ուրեմն այդ նամակը իրենց հօրմէն չէր: Քոյր ու եղբայր ապշութենէն կը քարանան. եղբայրը քրոջը կ'ըսէ.

«Այժմ քոյրիկս հեռանա՞նք այստեղից»:

Թարգմանութիւնը՝ իր արատներով հանդերձ՝ տանելի է. մարդ այս լեզուն՝ աւելի դիւրութեամբ կը կարդայ քան գրաբարի և աշխարհաբարի խառնուրդ charabia-ն:

Թարգմանութիւնը կատարուած է սակայն, փոխանակ բնագրի վրայէն՝ ուսերէնից:

ԶԱԽԻՆ

Պոլ Բուրժէի «Մի խոստովանութիւն» վէպիկ թարգմ. Ֆրանսերէնից ն. Յարոյ. 1903 թ. Թիֆլիզ գինն է 15 կ.:

Պոլ Բուրժէ՝ Ֆրանսայի այն գրողներէն է, զորս կարելի է բնորոշել միակ բառով մը—«սալոնական»: Պոլ Բուրժէ գրակա-նութեան դիլետանտ մը, սիրող մըն է: Ստեղծագործութեան պէտքը՝ իր մէջ կիրք մը չէ, ինչպէս Միրբօի մը, Զօլայի մը, Բօլ Ատանի մը, Ֆրանսի մը մէջ: Խնքը աշխատած է վերլուծել կարգ մը հոգեբանական կնճիռներ, որոնք անտարբեր պիտի թողէին բուն ժողովուրդը, ժողովրդական անկեղծ, խորունկ գըրականութեան մը սիրահարները:



Պոլ Բուրժէի մէջ որոշ համոզմունքներու, հաստատուն աշխարհայեցողութեան մը բացակայութիւնը՝ զինքը՝ հոգեկան ալլելայլ, մանաւանդ հակասական՝ վիճակներու առաջնորդած է:

Սկիզբները՝ Պոլ Բուրժէ սկեպտիկ էր. այսօր անիկա ջերմեռանդ հաւատացող մը, մոլեռանդ կաթողիկ մըն է:

Իր «Մի խոստովանութիւն» վէպիկը, զոր թարգմանած է պ. Ն. Յարոյ, դժգոյն նմոյշ մըն է իր մշակած գրական սեռին. այնտեղ դուք պիտի գտնէք Բուրժէի ոճին կապարեայ ծանրութիւնը, հոգեբանական վերլուծումներու մէջ սովորաբար գործ դրած չոր ու ձանձրալի մեթոդը: Վէպիկին նիւթն արդէն հեռու է ընթերցողին մէջ գեղեցիկ տրամադրութիւններ արթնցնելու: Թարգմանութեանց պէտքը՝ մեր մէջ, աւելի քան երբէք ստիպողական է ու անհրաժեշտ. բայց ժողովուրդը կերակրել այդ տեսակ սնունդներով պարզապէս անիմաստ է ու վնասակար:

Թարգմանութիւնը կատարուած է անբաւարար կերպով. Թարգմանչի ոճը գրաբարի արատներով լեցուն է. օրինակ «առաջին նուագ» — առաջին անգամ ըսելու տեղ — «փանակի կեանք», «մերժել է այլոց», «ողորմելի ծնաննելին», «երկիւղածութեամբ առաւելեալ ձայն» ևայլն ևայլն:

Կան և խորթ, աղճատ ձևեր. ինչպէս. անփախչելի ոճիւր», «թացուած ու գաղջ մարմին» ևայլն:

Շատ կան այս տեսակ նախադասութիւններ. «Հիւրանոցի հազիւ արթնցած կենող-վարձուրների ու դեռ սակաւամարդ առնթրեր հրապարակի լուծեան միջոցին»...

Ահաւասիկ վէպիկ մը, զոր խորհուրդ կուտայինք կարդալ բոլոր անքնութենէ տառապողներուն:

ԶԱԽՆ

Ն. Թոփկեանի՝ 1903 թ. համար կաղմած «ԼՈՅՍ» օրացոյցները. զրպանի՝ 266 էրես, զինը 20 կ., պատի՝ 732 էրես, զինը 50 կողեկ և սեղանի՝ 504 էրես, զինը 1 ըւրլի:

Գրական ոչ մէկ գործ՝ այնքան մեծ ծաւալով կը տարածուի ժողովուրդին մէջ, որքան օրացոյցը: Անիկա կը մտնէ հարուստին ինչպէս աղքատին, քաղաքացիին ինչպէս շինականին տան սեմէն ներս: Ուրեմն, ինքնին հասկանալի է, թէ չորհափ մեծ նշանակութիւն ունէր մասնաւորապէս մեզ, հայերու համար, օրացոյցային գրականութիւնը: Այդ գրականութիւնը